



**<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
2023Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Holiday Inn հյուրանոցի <Արտաշատ> սրահ՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 2 հասցեով և Zoom հավելվածի միջոցով
իրական ժամանակի ռեժիմում

Երկուշաբթի, 06 մայիսի 2024թ., 13:40

Մասնակցեցին՝

Բաժնետերեր

21 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ

Գագիկ Զաքարյան (նախագահ)

Հրահատ Արզումանյան

Վարդան Աթայան

Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ

Ռուբեն Ինջիկյան

Կարինե Մինասյան

Բանկի Վարչություն

Մեսրոպ Հակոբյան (նախագահ)

Արարատ Ղուկասյան

Գոհար Գրիգորյան

Օվսաննա Առաքելյան

Գուրգեն Ղուկասյան

Դավիթ Պետրոսյան

Վաղինակ Ստեփանյան

Արթուր Ապերյան

Սերգեյ Քոչարյան

Հրավիրվածներ

ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչ Լիլիթ Օվսյան

Հայաստանի բանկերի միության նախագահ Դանիել Ազատյան

<Գրանթ Թորնթոն> ՓԲԸ Խորհրդի նախագահ Արմեն Հովհաննիսյան

Հայաստանյան կազմակերպությունների ղեկավարներ

Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ 06.05.2024թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 10.04.2024թ. դրությամբ:

Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական կայքէջում, հրապարակվել է <Ժողովուրդ> օրաթերթում, ծանուցումները քվեաթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին փոստի միջոցով 19.04.2024թ-ին:

Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 06.05.2024թ-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 06.05.2024թ-ին:

Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 181.254.472 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 170.456.334 բաժնետոմս կամ տոկոսային հարաբերությամբ 94,04%-ը:

Քվորումն ապահովված է:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը բացեց նիստը և ողջունեց բոլոր բաժնետերերին և հյուրերին՝ նշելով, որ ուրախ է նաև առկա ձևաչափով կրկին հանդիպելու հնարավորությանը:

Նշեց, որ չնայած նախորդ տարվա տարածաշրջանային մարտահրավերներին, տարին Հայաստանի բանկային համակարգի համար կայուն էր: Յունիբանկի առաջընթացը նշանավորվեց շուկայում իր դիրքի ամրապնդման, ռազմավարական նպատակների իրագործման, հաճախորդների և գործընկերների հետ վստահելի հարաբերությունների զարգացման ձեռքբերումներով: 4.5 մլրդ դրամ գումարի չափով զուտ շահույթ ապահովելը թույլ է տվել Բանկի Խորհրդին Բաժնետերերի ժողովի հաստատմանը ներկայացնել 4.1 մլրդ դրամ ընդհանուր գումարի չափով հասարակ բաժնետոմսերի սեփականատերերին շահութաբաժինների վճարման հարցը: Հատկանշական համարեց ֆոնդային բորսայում Յունիբանկի բաժնետոմսերի արժեքի աճի դրական միտումը և անվանական արժեքից եռակի բարձր մակարդակի հասնելը:

Հաշվի առնելով ներդրումային ծառայությունների շուկայում աճող պահանջարկը՝ 2023 թվականի վերջին Բանկը գործարկել է նոր բիզնես ուղղություն՝ իր հաճախորդներին տրամադրելով առևտրային հարթակ՝ աշխարհի առաջատար բորսաներ դուրս գալու համար:

Աջակցելով ֆինտեխ-արդյունաբերության զարգացմանը՝ Յունիբանկը կազմակերպեց Երևանում FINTECH360 միջազգային համաժողովի անցկացումը, որը մեկ հարթակի վրա միավորեց ավելի քան 200 մասնագետների՝ թվային փոխակերպման հիմնական միտումները և ֆինանսական հատվածի ապագայի տեխնոլոգիաները քննարկելու համար:

Յունիբանկի կողմից զգալի քայլ է կատարվել ESG-սկզբունքներն իր ռազմավարության մեջ ինտեգրելու ուղղությամբ: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում Բանկը շարունակել է աջակցել կրթական, սպորտային և սոցիալական միջոցառումների ծրագրերին:

Ժողովի նախագահը նշեց, որ Բանկի ձեռքբերումները բարձր են գնահատվել միջազգային կազմակերպությունների կողմից՝ Visa համակարգը տարվա արդյունքներով Յունիբանկին շնորհել է Pinnacle Partnership մրցանակը, Unibank Prive-ն ճանաչվել է լավագույնը Հայաստանում՝ ըստ Euromoney Global Private Banking Awards 2023-ի:

Գագիկ Զաքարյանը վստահություն հայտնեց, որ 2024 թվականը ևս կնշանավորվի Բանկի ռազմավարական նախաձեռնությունների իրականացման նոր հաղթանակներով:

Ամփոփելով խոսքը՝ **Գագիկ Զաքարյանը** երախտագիտություն հայտնեց Բանկի բաժնետերերին, հաճախորդներին, գործընկերներին, Կենտրոնական բանկին, Հայաստանի բանկերի միությանը, աուդիտորներին՝ արդյունավետ համագործակցության, աջակցության և վստահության համար: Շնորհակալություն հայտնեց Յունիբանկի Վարչությանը և ողջ անձնակազմին՝ արդյունավետ աշխատանքի համար:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին՝ Բանկի 2023 թվականի գործունեության վերաբերյալ Վարչության հաշվետվությունը ներկայացնելու համար:

Հարց 1. <Յունիբանկ> ԲԲԸ 2023թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվության հաստատում:

Վարչության նախագահ-գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ 2023թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը: Նշեց, որ Յունիբանկը շարունակել է իր դինամիկ գործունեությունը՝ իրագործելով նորարարական համալիր լուծումներ և մոտեցումներ, որոնք թույլ են տվել Յունիբանկին բարձրացնել իր գործառնական արդյունավետությունը և իր դրական ներդրումն ունենալ Հայաստանի տնտեսության մեջ:

Հիմնական շեշտը դրվել էր ռիսկերի առավել արդյունավետ նույնականացման, գնահատման և կառավարման համար մեթոդաբանության մշակման, կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրման, ներդրումային կլիմայի բարելավման և ծառայությունների բարձր որակի ապահովման վրա:

Կապիտալի ներգրավման ուղղությամբ հերթական քայլն անելով՝ Յունիբանկն իրականացրել է հասարակ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում և համալրել է կանոնադրական կապիտալը 2.5 մլրդ դրամով՝ ավելացնելով միևնույն տարբերակի մասնաբաժինը: Հանդիսանալով արժեթղթերի շուկայի ակտիվ մասնակիցներից մեկը՝ Բանկը 2023թ. իրականացրել է պարտատոմսերի թողարկում և հաջողությամբ տեղաբաշխել է 2 մլրդ դրամ և 5 մլն դոլար:

Մեսրոպ Հակոբյանն ամփոփ ներկայացրեց Բանկի ֆինանսական ցուցանիշները, մանրաձախ և կորպորատիվ բիզնեսի ոլորտներում ունեցած հաջողությունները: Հետևելով էկոլոգիական պատասխանատվության սկզբունքներին՝ Բանկն ակտիվ մասնակցել է Հայաստանում կանաչ ֆինանսավորման զարգացմանը, ֆինանսավորել է վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության բարձրացման, թափոնները նվազեցնելու համար արտադրության արդիականացման ոլորտի ծրագրերը, դարձել է ագրովարկավորման ծրագրի մասնակից: Յունիբանկը շարունակել է ակտիվ մասնակցել Արցախի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրին: 2023թ. առաջին եռամսյակի արդյունքներով, Յունիբանկը վարկերի քանակով դարձել է Հայաստանի շուկայի առաջատարը:

Վարչության նախագահը նշեց, որ զգալի աշխատանք է կատարվել նաև կորպորատիվ կառավարման ոլորտում՝ Խորհրդի և Վարչության կազմում ներգրավելով Բանկի գործունեության տարբեր առանցքային ոլորտներում մեծ փորձառությամբ նոր անդամների, բարձրացնելով վերահսկողության և հաշվետվողականության համակարգի թափանցիկությունը:

Կադրային քաղաքականության արդիական ուղղությունն ու խնդիրը անձնակազմի արտահոսքի կրճատումն ու որակավորված մասնագետների որոնումն էր, ինչը աշխատաշուկայում բարձր մրցակցության պայմաններում Յունիբանկին հաջողվեց լուծել: Գրավիչ աշխատանքային պայմանների, մրցունակ կորպորատիվ փաթեթների ստեղծումը, աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերի իրականացումը նպաստել են Բանկի զարգացմանը և հաջողությանը:

2024թ. հիմնական ռազմավարական առաջնահերթությունների թվում **Մեսրոպ Հակոբյանը** առանձնացրեց շուկայում Բանկի մասնաբաժնի ավելացումը և հաճախորդների բազայի աճը, եկամտի նոր աղբյուրների ձևավորումը, ESG-ի բոլոր երեք ուղղությունների համակարգված զարգացումը, 11.8 մլրդ դրամ զուտ շահույթի ապահովումը:

Եզրափակելով՝ **Մեսրոպ Հակոբյանը** Բանկի Վարչության անունից շնորհակալություն հայտնեց բաժնետերերին՝ աջակցության և վստահության համար, հաճախորդներին և գործընկերներին՝ Յունիբանկին որպես հուսալի ֆինանսական գործընկեր ընտրելու համար, անձնակազմին՝ պրոֆեսիոնալիզմի և ջանասեր աշխատանքի համար:

Համոզմունք հայտնեց, որ համատեղ ջանքերի շնորհիվ Յունիբանկը կշարունակի իր վստահ ուղին դեպի նոր բարձունքներ և հաջողություններ:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2023թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով.

կողմ՝ 170.456.334 ձայն կամ մասնակիցների ձայների 94.04%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 2. <Յունիբանկ> ԲԲԸ 2023թ. ֆինանսական հաշվետվությունների հաստատում: <Յունիբանկ> ԲԲԸ 2023թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ <Գրանթ Թորնթոն> աուդիտորական ընկերության եզրակացության ներկայացում:

Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը ներկայացրեց Խորհրդի կողմից նախնական հաստատված ըստ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կազմված Բանկի 2023 թվականի տարեկան հաշվետվությունները հետևյալ հիմնական ցուցանիշներով՝

1. դրամական միջոցներ և դրանց համարժեքներ՝ 55,669,030 հազ ՀՀ դրամ
2. ածանցյալ ֆինանսական ակտիվներ՝ 11,236 հազ ՀՀ դրամ
3. պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 26,183,579 հազ ՀՀ դրամ
4. հաճախորդներին տրված վարկեր՝ 149,364,985 հազ ՀՀ դրամ
5. ներդրումային արժեթղթեր՝ 27,074,022 հազ ՀՀ դրամ
6. վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր՝ 9,387,266 հազ ՀՀ դրամ
7. հիմնական միջոցներ՝ 10,285,957 հազ ՀՀ դրամ
8. ոչ նյութական ակտիվներ՝ 3,355,572 հազ ՀՀ դրամ
9. այլ ակտիվներ՝ 7,538,337 ՀՀ դրամ
10. ընդամենը ակտիվներ՝ 288,869,984 հազ ՀՀ դրամ
11. պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ՝ 18,720,835 հազ ՀՀ դրամ
12. պարտավորություններ հաճախորդների նկատմամբ՝ 211,193,170 ՀՀ դրամ
13. ածանցյալ ֆինանսական պարտավորություններ՝ 1,055 հազ ՀՀ դրամ
14. փոխառություններ՝ 4,914,586 հազ ՀՀ դրամ
15. թողարկված պարտքային արժեթղթեր՝ 9,347,121 հազ ՀՀ դրամ
16. ընթացիկ հարկի գծով պարտավորություն՝ 726,560 հազ ՀՀ դրամ
17. հետաձգված հարկային պարտավորություն՝ 539,849 հազ ՀՀ դրամ

18. այլ պարտավորություններ՝ 2,825,940 հազ ՀՀ դրամ
19. ընդամենը պարտավորություններ՝ 248,269,116 հազ ՀՀ դրամ
20. բաժնետիրական կապիտալ՝ 22,425,447 հազ ՀՀ դրամ
21. էմիսիոն եկամուտ՝ 11,279,227 հազ ՀՀ դրամ
22. գլխավոր պահուստ՝ 686,316 հազ ՀՀ դրամ
23. այլ պահուստներ՝ 1,440,850 հազ ՀՀ դրամ
24. չբաշխված շահույթ՝ 4,769,028 հազ ՀՀ դրամ
25. ընդամենը սեփական կապիտալ՝ 40,600,868 հազ ՀՀ դրամ
26. ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ՝ 288,869,984 հազ ՀՀ դրամ

Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը՝

- տոկոսային եկամուտ՝ 25,245,475 հազ ՀՀ դրամ
- տոկոսային ծախսեր՝ (9,413,673) հազ ՀՀ դրամ
- զուտ տոկոսային եկամուտներ՝ 15,831,802 հազ ՀՀ դրամ
- միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ՝ 5,665,379 հազ ՀՀ դրամ
- միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր՝ (1,924,180) հազ ՀՀ դրամ
- միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտներ՝ 3,741,199 հազ ՀՀ դրամ
- զուտ առևտրային եկամուտ՝ 7,852,943 հազ ՀՀ դրամ
- այլ եկամուտներ՝ 830,414 հազ ՀՀ դրամ
- պարտքային կորուստների գծով ծախս՝ (3,216,147) հազ ՀՀ դրամ
- վնաս պարտքի զիջումից՝ (2,407,241) հազ ՀՀ դրամ
- ներդրումային արժեթղթերի սկզբնական ճանաչումից վնաս (303,964) հազ ՀՀ դրամ
- անձնակազմի գծով ծախսեր՝ (7,479,231) հազ ՀՀ դրամ
- հիմնական միջոցների մաշվածություն՝ (1,450,435) հազ ՀՀ դրամ
- ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա՝ (679,425) հազ ՀՀ դրամ
- այլ ծախսեր՝ (6,331,998) հազ ՀՀ դրամ
- շահույթ մինչև հարկումը՝ 6,387,917 հազ ՀՀ դրամ
- շահութահարկի գծով ծախս՝ (1,933,719) հազ ՀՀ դրամ
- տարվա շահույթ՝ 4,454,198 հազ ՀՀ դրամ

Դրամական միջոցների հոսքը՝

- դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները՝ 15,614,868 հազ ՀՀ դրամ
- գործառնական գործունեությունից ստացված / (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (63,618,112) հազ ՀՀ դրամ
- ներդրումային գործունեությունից ստացված / (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր՝ 13,406,430 հազ ՀՀ դրամ
- ֆինանսավորման գործունեությունից ստացված / (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր՝ 5,332,060 հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազումը՝ (44,879,622) հազ ՀՀ դրամ
- արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա՝ 536,555 հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ՝ 100,012,097 հազ ՀՀ դրամ
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 55,669,030 հազ ՀՀ դրամ

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց, որ համաձայն <Գրանթ Թորնթոն> աուդիտորական ընկերության եզրակացության, Բանկի ֆինանսական հաշվետվությունները տալիս են <Յունիբանկ> բաց բաժնետիրական ընկերության 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2023թ. ֆինանսական հաշվետվությունները քվեարկության հետևյալ արդյունքներով.

Կողմ՝ 170.456.334 ձայն կամ մասնակիցների ձայների 94.04%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 3. 2023թ. Ներքին աուդիտի հաշվետվության հաստատում: <Յունիբանկ> ԲԲԸ ներքին հսկողության համակարգի վերաբերյալ Ներքին աուդիտի եզրակացության ներկայացում:

Ներքին աուդիտի տնօրեն Արթուր Ղուկասովը ներկայացրեց ըստ տարեկան աշխատանքային ծրագրի անցկացրած և արտապլանային աուդիտորական ստուգումների ոլորտները: Տարվա ընթացքում իրականացվել է համալիր ստուգում 12 մասնաճյուղերում, 49 մասնաճյուղերում՝ նպատակային ստուգումներ ըստ ոլորտների, գլխամասային գրասենյակում իրականացվել է գործունեության տարբեր ոլորտների աուդիտ, այդ թվում՝ 200 մլն դրամ և ավելի գումարի առևտրային վարկերի, 100 մլն դրամ և ավելի գումարի հիփոթեքային և սպառողական վարկերի ստուգում և դրանց դիմաց ձևավորված պահուստների արժանահավատության գնահատում, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված միջոցառումների ստուգում, FATCA պահանջների, ներքին ընթացակարգերի և կարգավորող պահանջների, Արտաքին և Ներքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների լուծման հետստուգում:

Հայտնաբերված խնդիրների լուծման նպատակով կազմվել են միջոցառումների ծրագրեր, որոնց կատարման նկատմամբ իրականացվել է հետևողական հսկողություն:

Ներկայացնելով Բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ Ներքին աուդիտի կարծիքի հիմքում ընկած միջոցառումները՝ **Արթուր Ղուկասովը** եզրափակեց, որ Բանկի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պայմաններին:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ 2023թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով.

Կողմ՝ 170.456.334 ձայն կամ մասնակիցների ձայների 94.04%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 4. <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամների ընտրություն և քանակական կազմի հաստատում:

Գագիկ Զաքարյանը ներկայացրեց Խորհրդի անդամների ընտրության վերաբերյալ Խորհրդի հետևյալ առաջարկությունները՝

- Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի,

- վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Հրահատ Արզումանյանին, Վարդան Աթայանին, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտին (անկախ), Ռուբեն Ինջիկյանին (անկախ), Կարինե Մինասյան (անկախ):

Քվեարկության արդյունքներով թեկնածուները ստացել են ձայների հետևյալ քանակը.

Գագիկ Զաքարյան՝ 24.361.122 ձայն
Գեորգի Պիսկով՝ 24.359.217 ձայն
Հրահատ Արզումանյան՝ 24.345.034 ձայն
Վարդան Աթայան՝ 24.351.966 ձայն
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ՝ 24.344.833 ձայն
Ռուբեն Ինջիկյան՝ 24.344.683 ձայն
Կարինե Մինասյան՝ 24.344.809 ձայն

Բոլոր թեկնածուների դեմ՝ 0 ձայն

Թեկնածուների գծով ձեռնպահ՝ 0 ձայն

Անվավեր՝ 4.670 ձայն կամ մասնակիցների ձայների 0.003%

Բաժնետերերի ժողովը որոշում կայացրեց <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի քանակական կազմը սահմանել յոթ հոգի, վերընտրել Խորհրդի անդամներ և հաստատել Խորհրդի կազմը հետևյալ կերպ՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Հրահատ Արզումանյան, Վարդան Աթայան, Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ (անկախ), Ռուբեն Ինջիկյան (անկախ), Կարինե Մինասյան (անկախ):

Հարց 5. <Յունիբանկ> ԲԲԸ 2023թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում:

Գագիկ Զաքարյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով Բանկի 2023թ. գործունեության ֆինանսական արդյունքները, 05.04.2024թ. Բանկի Խորհրդի որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկվում է՝

- Բանկի կուտակված շահույթից սովորական անվանական բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ դրամով՝ 4.100.000.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով, մեկ բաժնետոմսի մասով 22.62 ՀՀ դրամ հաշվարկով,
- տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 03.06.2024թ-ից մինչև 28.06.2024թ. ընկած ժամանակահատվածում սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
- պահուստային հիմնադրամին հատկացնել Բանկի 2023թ. զուտ շահույթի 5% - ը:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց՝ հաշվի առնելով <Յունիբանկ> ԲԲԸ 2023թ. գործունեության ֆինանսական արդյունքները՝

- Բանկի կուտակված շահույթից սովորական անվանական բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ դրամով՝ 4.100.000.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով, մեկ բաժնետոմսի մասով 22.62 ՀՀ դրամ հաշվարկով,
- տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 03.06.2024թ-ից մինչև 28.06.2024թ. ընկած ժամանակահատվածում սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան

ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

- պահուստային հիմնադրամին հատկացնել Բանկի 2023թ. զուտ շահույթի 5% - ը:

Կողմ՝ 170.456.334 ձայն կամ մասնակիցների ձայների 94.04%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 6. <Յունիբանկ> ԲԲԸ <Շահութաբաժինների վճարման քաղաքականություն> ներքին իրավական ակտի հաստատում:

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց, որ 05.04.2024թ. Խորհրդի որոշմամբ առաջարկվում է հաստատել <Շահութաբաժինների վճարման քաղաքականություն> ներքին իրավական ակտը, որը սահմանում է շահութաբաժինների չափի և պայմանների որոշման սկզբունքները, վճարման վերաբերյալ որոշման կայացման և վճարման գործընթացը: Շահութաբաժինների վճարման թիրախային մակարդակը առաջարկվում է սահմանել Բանկի նախորդ տարվա զուտ շահույթի առնվազն 25 տոկոսը:

Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ <Շահութաբաժինների վճարման քաղաքականություն> ներքին իրավական ակտը քվեարկության հետևյալ արդյունքներով.

Կողմ՝ 170.456.334 ձայն կամ մասնակիցների ձայների 94.04%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Հարց 7. <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերի հաստատում:

Վարչության նախագահի առաջին տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետքերման տնօրեն Օվսաննա Առաքելյանը ներկայացրեց, որ <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերը վերահաստատվել են 22.05.2023թ. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ: Հաշվի առնելով, որ <<Բանկերի և բանկային գործունեության մասին>> ՀՀ օրենքում, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերում չեն կատարվել այնպիսի էական փոփոխություններ, որոնք կհանգեցնեին նշված իրավական ակտերը խմբագրելու անհրաժեշտության, ի հայտ չեն եկել էական անհամապատասխանություններ, 05.04.2024թ. Խորհրդի որոշմամբ առաջարկվում է նշված ներքին իրավական ակտերը թողնել անփոփոխ և հաստատել դրանք:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց հաստատել <<Յունիբանկ> ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ> և <<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կանոնակարգ> ներքին իրավական ակտերը.

Կողմ՝ 170.456.334 ձայն կամ մասնակիցների ձայների 94.04%

դեմ՝ 0 ձայն

ձեռնպահ՝ 0 ձայն

անվավեր՝ 0 ձայն

Աննա Բադյանը հայտարարեց, որ Ժողովի օրակարգի բոլոր հարցերը քննարկված են, որոշումներն ընդունված են:

Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և դիմեց ներկաներին հարցեր տալու առաջարկով:

Բարձրացվեցին հարցեր բաժնետերերի արտոնությունների, սպասարկման սակագների, մասնաճյուղային ցանցի աշխարհագրության ընդլայնման ծրագրերի, Բանկի բարեգործական նախագծերի և այլ հարցերի վերաբերյալ, ինչպես նաև բաց բաժնետիրական ընկերությունների օրենսդրական կարգավորմանը վերաբերող հարցեր: Բոլոր հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ:

Հայաստանի բանկերի միության նախագահ Դանիել Ազատյանը հանդես եկավ ելույթով, շնորհավորեց բաժնետերերին կայացած Տարեկան ժողովի կապակցությամբ, Յունիբանկի ղեկավարությանը կատարված աշխատանքի և արձանագրված առաջընթացի համար: Նշեց, որ գործունեության ավելի քան 20 տարիների ընթացքում Յունիբանկը մշտապես հաջողությամբ դիրքավորվել է շուկայում և ճկուն հարմարվել նոր իրականությանը: Մաղթեց հետագա հաջողություններ և բարձր արդյունքներ իր գործունեության մեջ՝ որպես առաջատար բանկ ոչ միայն Հայաստանում, այլ նաև տարածաշրջանում:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց Դանիել Ազատյանին Հայաստանի Բանկերի միության հետ արդյունավետ համագործակցության համար, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին Յունիբանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին ներկա լինելու համար:

Բաժնետերերի ժողովն ավարտվեց ժամը 15:00-ին:

Գագիկ Զաքարյան
Նախագահ

Աննա Բադյան
Քարտուղար

ք. Երևան, 08 մայիսի 2024թ.



**ПРОТОКОЛ
ГОДОВОГО ОБЩЕГО СОБРАНИЯ АКЦИОНЕРОВ
ОАО «ЮНИБАНК» 2023г.**

зал «Арташат» гостиницы Holiday Inn по адресу РА, г. Ереван, ул. Амиряна 2 и в Zoom в режиме реального времени
понедельник, 06 мая 2024 года, 13:40

Присутствовали:

Акционеры

21 акционер на момент открытия заседания

Совет Банка

Гагик Закарян (председатель)

Граат Арзуманян

Вардан Атаян

Филипп Рене Марк Дельмот

Рубен Инджикян

Каринэ Минасян

Правление Банка

Месроп Акопян (председатель)

Арарат Гукасян

Гоар Григорян

Овсання Аракелян

Гурген Гукасян

Давид Петросян

Вагинак Степанян

Артур Аперян

Сергей Кочарян

Приглашенные

Представитель Центрального банка РА Лилит Овсян

Председатель Союза Банков Армении Даниэл Азатян

Председатель Совета ЗАО «Грант Торнтон» Армен Оганнисян

Руководители армянских организаций

Руководители структурных подразделений Банка

Секретарем Собрания была назначена председатель Счетной комиссии Анна Бадоян.

Анна Бадоян представила, что голосование Годового общего собрания акционеров ОАО «Юнибанк» 06.05.2024г. осуществлено посредством бюллетеней. Список акционеров, имеющих право на участие на Собрании, составлен на 10.04.2024г.

Объявление о созыве Собрания было надлежащим образом размещено на официальном сайте Банка, опубликовано в газете «Жоговурд», уведомления вместе с бюллетенями голосования были отправлены акционерам по почте 19.04.2024г.

Прием заполненных бюллетеней по вопросам повестки дня был завершён 06.05.2024г., до момента окончания регистрации участников Собрания. Протокол Счетной комиссии составлен 06.05.2024г.

Суммарное количество голосов размещенных голосующих обыкновенных акций Банка составило 181.254.472 штуки, из которых в голосовании приняли участие 170.456.334 акции, имеющие право голоса, или в процентном соотношении 94,04%.

Кворум обеспечен.

Председатель Собрании Гагик Закарян открыл заседание и поприветствовал всех акционеров и гостей, отметив, что рад возможности вновь встретиться также в очном формате.

Заметил, что несмотря на региональные вызовы прошедшего года банковская система Армении продемонстрировала стабильность. Прогресс Юнибанка был отмечен достижениями в укреплении своей позиции на рынке, реализации стратегических целей, развитии доверительных отношений с клиентами и партнерами. Обеспечение чистой прибыли в размере 4.5 млрд драм позволило Совету Банка представить на утверждение Собрании вопрос о выплате годовых дивидендов владельцам обыкновенных акций на общую сумму 4.1 млрд драм. Отметил примечательным позитивную тенденцию роста стоимости акций Юнибанка на фондовой бирже до уровня, втрое превышающего номинальную стоимость.

Учитывая растущий спрос на рынке инвестиционных услуг, в конце 2023 года Банк запустил новое бизнес-направление, предоставив своим клиентам торговую платформу для выхода на ведущие биржи мира.

Поддерживая развитие финтех-индустрии, Юнибанк выступил организатором проведенной в Ереване международной конференции FINTECH360, которая объединила на одной площадке более 200 профессионалов для обсуждения ключевых трендов цифровой трансформации и технологий будущего финансового сектора.

Значительный шаг был сделан Юнибанком в направлении интеграции ESG-принципов в свою стратегию. В рамках корпоративной социальной ответственности Банк продолжал содействовать программам образовательных, спортивных и социальных мероприятий.

Председатель Собрании отметил, что достижения Банка были высоко оценены со стороны международных организаций: по итогам года система Visa присудила Юнибанку награду Pinnacle Partnership, Unibank Privé был признан лучшим в Армении по версии Euromoney Global Private Banking Awards 2023.

Гагик Закарян выразил уверенность, что 2024 год также будет ознаменован новыми победами в реализации стратегических инициатив Банка.

В завершение речи **Гагик Закарян** выразил слова признательности акционерам, клиентам, партнерам Банка, Центральному банку, Союзу банков Армении, аудиторам за эффективное сотрудничество, поддержку и доверие. Поблагодарил за плодотворную работу Правление и всю команду Юнибанка.

Председатель Собрании Гагик Закарян предоставил слово председателю Правления Месропу Акопяну для презентации отчета Правления о деятельности Банка за 2023 год.

Вопрос 1. Утверждение годового отчета Правления о деятельности ОАО «Юнибанк» за 2023г.

Председатель Правления - исполнительный директор Месроп Акопян представил годовой отчет Правления о деятельности ОАО «Юнибанк» за 2023 год. Отметил, что Банк продолжил свою динамичную деятельность, реализовав комплекс инновационных решений и подходов, позволивших повысить операционную эффективность Банка и внести положительный вклад в экономику Армении.

Основной акцент был поставлен на разработку методологии для более эффективной идентификации, оценки и управления рисками, на внедрение лучших практик корпоративного управления, улучшение инвестиционного климата и обеспечение высокого качества услуг.

Проделав очередной шаг на привлечение капитала, Юнибанк осуществил дополнительный выпуск обыкновенных акций и пополнил уставной капитал на 2.5 млрд драм с увеличением доли участия миноритарных акционеров. Являясь одним из активных участников рынка ценных бумаг, Банк в 2023 году осуществил эмиссию облигаций и успешно разместил 2 млрд драм и 5 млн долларов.

Месроп Акопян представил обзор финансовых результатов, достигнутых успехов в сфере розничного и корпоративного бизнеса. Следуя принципам экологической ответственности, Банк активно участвовал в развитии зеленого финансирования в Армении, финансировал проекты в области возобновляемой энергии и повышения энергоэффективности, модернизации производства для сокращения отходов, стал участником программы агрокредитования. Активно участвуя в реализации социально-значимых проектов, Юнибанк продолжал активно участвовать в программе господдержки по обеспечению жилищной доступности для семей, насильственно перемещенных из отдельных районов Арцаха. По итогам первого квартала 2023 года, Юнибанк стал лидером рынка Армении по количеству кредитов.

Председатель Правления отметил, что значительная работа проведена также в области корпоративного управления с привлечением новых членов Совета и Правления с обширным опытом и экспертизой в различных ключевых аспектах деятельности Банка, повышением прозрачности системы контроля и подотчетности.

Актуальным направлением и задачей кадровой политики в прошедшем году было сокращение текучести кадров и

поиск квалифицированных специалистов, что в условиях высокой конкуренции на рынке труда Юнибанку удалось реализовать. Создание привлекательных условий труда, конкурентоспособных компенсационных пакетов, реализация программ обучения и повышения квалификации персонала способствовало росту и успеху Банка.

В числе основных стратегических приоритетов для реализации в 2024 году **Месроп Акопян** выделил увеличение доли Банка на рынке и рост клиентской базы; разработку новых источников дохода; планомерное развитие всех трех направлений ESG; обеспечение показателя чистой прибыли в 11.8 млрд драм.

В заключение **Месроп Акопян** от имени Правления Банка выразил благодарность акционерам за их поддержку и доверие, признательность клиентам и партнерам - за их выбор Юнибанка в качестве надежного финансового союзника, команде Юнибанка – за профессионализм и неустанный труд.

Выразил уверенность в том, что благодаря совместным усилиям Юнибанк продолжит свой уверенный путь к новым высотам и успеху.

Собрание акционеров утвердило годовой отчет Правления о деятельности ОАО “Юнибанк” за 2023 год по следующим итогам голосования:

за – 170.456.334 голоса или 94.04% голосов участников

против - 0 голосов

воздержался - 0 голосов

недействительных - 0 голосов

Вопрос 2. Утверждение финансовых отчетов ОАО “Юнибанк” за 2023г. Заключение аудиторской компании “Грант Торнтон” о финансовых отчетах ОАО “Юнибанк” за 2023г.

Член Правления, Финансовый директор - Главный бухгалтер Гоар Григорян представила предварительно утвержденные Советом годовые отчеты Банка за 2023 год со следующими основными показателями по международным стандартам финансовой отчетности:

1. денежные средства и их эквиваленты – 55,669,030 тыс. драм РА
2. финансовые производные активы - 11,236 тыс. драм РА
3. требования к финансовым организациям – 26,183,579 тыс. драм РА
4. выданные клиентам кредиты – 149,364,985 тыс. драм РА
5. инвестиционные ценные бумаги – 27,074,022 тыс. драм РА
6. инвестиционные ценные бумаги, заложенные по договорам купли-продажи и выкупа – 9,387,266 тыс. драм РА
7. основные средства – 10,285,957 тыс. драм РА
8. нематериальные активы – 3,355,572 тыс. драм РА
9. прочие активы – 7,538,337 тыс. драм РА
10. итого активы – 288,869,984 тыс. драм РА
11. обязательства перед финансовыми организациями – 18,720,835 тыс. драм РА
12. обязательства перед клиентами – 211,193,170 тыс. драм РА
13. производные финансовые обязательства – 1,055 тыс. драм РА
14. обязательства по займам – 4,914,586 тыс. драм РА
15. выпущенные банком долговые ценные бумаги – 9,347,121 тыс. драм РА
16. текущее обязательство по налогу на прибыль – 726,560 тыс. драм РА
17. отложенное налоговое обязательство – 539,849 тыс. драм РА
18. прочие обязательства – 2,825,940 тыс. драм РА
19. итого обязательства – 248,269,116 тыс. драм РА
20. акционерный капитал – 22,425,447 тыс. драм РА
21. эмиссионный доход – 11,279,227 тыс. драм РА
22. главный резерв – 686,316 тыс. драм РА
23. прочие резервы – 1,440,850 тыс. драм РА
24. нераспределенная прибыль – 4,769,028 тыс. драм РА
25. итого собственный капитал – 40,600,868 тыс. драм РА
26. итого обязательства и собственный капитал – 288,869,984 тыс. драм РА

Структура доходов и расходов:

- процентный доход – 25,245,475 тыс. драм РА
- процентные расходы - (9,413,673) тыс. драм РА
- чистые процентные доходы – 15,831,802 тыс. драм РА
- комиссионные и прочие доходы – 5,665,379 тыс. драм РА
- комиссионные и прочие расходы – (1,924,180) тыс. драм РА

- чистые комиссионные и прочие доходы – 3,741,199 тыс. драм РА
- чистый доход от торговых операций – 7,852,943 тыс. драм РА
- прочие доходы – 830,414 тыс. драм РА
- расходы по резервированию возможных убытков от обесценивания активов – (3,216,147) тыс. драм РА
- убыток от уступки долга - (2,407,241) тыс. драм РА
- убыток при первоначальном признании инвестиционных ценных бумаг - (303,964) тыс. драм РА
- затраты на персонал – (7,479,231) тыс. драм РА
- амортизация основных средств – (1,450,435) тыс. драм РА
- амортизация нематериальных активов – (679,425) тыс. драм РА
- прочие расходы – (6,331,998) тыс. драм РА
- прибыль до налогообложения – 6,387,917 тыс. драм РА
- налог на прибыль – (1,933,719) тыс. драм РА
- прибыль за год – 4,454,198 тыс. драм РА

Движение денежных средств:

- денежные потоки до изменений в операционных активах и обязательствах – 15,614,868 тыс. драм РА
- чистые денежные потоки от операционной деятельности – (63,618,112) тыс. драм РА
- чистые денежные потоки от инвестиционной деятельности – 13,406,430 тыс. драм РА
- чистые денежные потоки от финансовой деятельности – 5,332,060 тыс. драм РА
- чистый отток денежных средств и их эквивалентов - (44,879,622) тыс. драм РА
- влияние курсовых разниц на денежные средства и их эквиваленты - 536,555 тыс. драм РА
- денежные средства и их эквиваленты на начало года - 100,012,097 тыс. драм РА
- денежные средства и их эквиваленты на конец года – 55,669,030 тыс. драм РА

Гоар Григорян представила, что согласно заключению независимой аудиторской компании “Грант Торнтон”, финансовые отчеты Банка достоверно отражают финансовое положение открытого акционерного общества “Юнибанк” по состоянию на 31 декабря 2023 года, а также финансовые результаты его деятельности и движение денежных средств за год, закончившийся на указанную дату, в соответствии с требованиями международных стандартов финансовой отчетности.

Собрание акционеров утвердило финансовые отчеты ОАО “Юнибанк” за 2023 год по следующим итогам голосования:

за – 170.456.334 голоса или 94.04% голосов участников

против - 0 голосов

воздержался - 0 голосов

недействительных - 0 голосов

Вопрос 3. Утверждение отчета Внутреннего аудита за 2023г. Заключение Внутреннего аудита о системе внутреннего контроля ОАО “Юнибанк”.

Директор Внутреннего аудита Артур Гукасов представил сферы аудиторских проверок, проведенных в соответствии с годовым рабочим планом и вне плана. В течение года была проведена комплексная проверка в 12-и филиалах, в 49-и филиалах – целевые проверки по отраслям, в центральном офисе был проведен аудит разных сфер деятельности, в том числе по портфелям бизнес кредитов на сумму свыше 200 млн драм, ипотечных и потребительских кредитов на сумму свыше 100 млн драм с оценкой достоверности сформированных по ним резервов, проверка мер по борьбе с отмыванием денег и финансированием терроризма, на предмет соблюдения требований FATCA, внутренних процедур и регуляторных требований, последпроверка на предмет устранения выявленных проблем, представленных в отчетах Внешнего и Внутреннего аудита.

По устранению выявленных проблем и несоответствий были составлены планы мероприятий, за исполнением которых осуществлялся последовательный контроль.

Представив мероприятия, на которых основано мнение Внутреннего аудита об эффективности организации системы внутреннего контроля Банка, **Артур Гукасов** заключил, что система внутреннего контроля Банка соответствует минимальным требованиям, установленным центральным банком Республики Армения.

Собрание акционеров утвердило отчет Внутреннего аудита ОАО “Юнибанк” за 2023г. по следующим итогам голосования:

за – 170.456.334 голоса или 94.04% голосов участников

против - 0 голосов

воздержался - 0 голосов

недействительных - 0 голосов

Вопрос 4. Избрание членов Совета и утверждение количественного состава Совета ОАО “Юнибанк”.

Гагик Закарян представил следующие предложения Совета о выборах в Совет:

- количественный состав Совета утвердить семь человек,
- переизбрать членов Совета Гагика Закаряна, Георгия Пискова, Граата Арзуманяна, Вардана Атаяна, Филиппа Рене Марка Дельмота (независимый), Рубена Инджикяна (независимый), Каринэ Минасян (независимый).

По итогам голосования, кандидаты получили следующее количество голосов:

Гагик Закарян – 24.361.122 голоса
Георгий Писков – 24.359.217 голосов
Граат Арзуманян – 24.345.034 голоса
Вардан Атаян – 24.351.966 голосов
Филипп Рене Марк Дельмот – 24.344.833 голоса
Рубен Инджикян – 24.344.683 голоса
Каринэ Минасян - 24.344.809 голосов

Против всех кандидатов – 0 голосов

Воздержались по всем кандидатам - 0

Недействительных – 4.670 голосов или 0.003% голосов участников

Собрание акционеров приняло решение количественный состав Совета утвердить семь человек, переизбрать членов Совета и утвердить Совет в следующем составе: Гагик Закарян, Георгий Писков, Граат Арзуманян, Вардан Атаян, Филипп Рене Марк Дельмот (независимый), Рубен Инджикян (независимый), Каринэ Минасян (независимый).

Вопрос 5. Решение о выплате годовых дивидендов по финансовым результатам ОАО “Юнибанк” за 2023г.

Гагик Закарян представил, что учитывая финансовый результат деятельности ОАО “Юнибанк” за 2023г., Общему собранию акционеров решением Совета Банка от 05.04.2024г. предлагается:

- из накопленной прибыли Банка выплатить годовые дивиденды по обыкновенным именным акциям в денежной форме на общую сумму 4.100.000.000 драм РА, из расчета 22.62 драм РА по одной акции,
- выплату годовых дивидендов осуществить в срок с 03.06.2024г. до 28.06.2024г. владельцам обыкновенных именных акций, которые включены в реестр участников Банка по состоянию на дату составления списка акционеров, имеющих право на участие в Собрании,
- в резервный фонд выделить 5% от чистой прибыли Банка за 2023г.

Собрание акционеров, по следующим итогам голосования, приняло решение, учитывая финансовый результат деятельности ОАО “Юнибанк” за 2023г.:

- из накопленной прибыли Банка выплатить годовые дивиденды по обыкновенным именным акциям в денежной форме на общую сумму 4.100.000.000 драм РА, из расчета 22.62 драм РА по одной акции,
- выплату годовых дивидендов осуществить в срок с 03.06.2024г. до 28.06.2024г. владельцам обыкновенных именных акций, которые включены в реестр участников Банка по состоянию на дату составления списка акционеров, имеющих право на участие в Собрании,
- в резервный фонд выделить 5% от чистой прибыли Банка за 2023г.

за – 170.456.334 голоса или 94.04% голосов участников

против - 0 голосов

воздержался - 0 голосов

недействительных - 0 голосов

Вопрос 6. Утверждение внутреннего правового акта ОАО “Юнибанк” “Политика выплаты дивидендов”.

Месроп Акопян представил, что решением Совета от 05.04.2024г. предлагается утвердить внутренний правовой

акт “Политика выплаты дивидендов”, который устанавливает принципы определения размера и условий выплаты дивидендов, процесс принятия решения о выплате и организации выплаты. Целевой уровень выплаты дивидендов предлагается установить не менее 25 процентов от чистой прибыли Банка за предыдущий год.

Собрание акционеров утвердило внутренний правовой акт ОАО “Юнибанк” “Политика выплаты дивидендов” по следующим итогам голосования:

за – 170.456.334 голоса или 94.04% голосов участников

против - 0 голосов

воздержался - 0 голосов

недействительных - 0 голосов

Вопрос 7. Утверждение внутренних правовых актов “Порядок подготовки и проведения Общего собрания участников ОАО “Юнибанк”” и “Положение о Совете ОАО “Юнибанк””

Первый заместитель председателя Правления, директор по правовому обслуживанию и возврату просроченной задолженности Овсанна Аракелян представила, что внутренние правовые акты “Порядок подготовки и проведения Общего собрания участников ОАО “Юнибанк”” и “Положение о Совете ОАО “Юнибанк”” были переутверждены решением Годового общего собрания акционеров 22.05.2023г. Учитывая, что в законе РА “О банках и банковской деятельности”, а также в подзаконных актах не было внесено значительных изменений, которые привели бы к необходимости отредактировать указанные внутренние правовые акты, не были выявлены существенные несоответствия, решением Совета от 05.04.2024г. предлагается оставить названные внутренние правовые акты без изменений и утвердить их.

Собрание акционеров, по следующим итогам голосования, приняло решение утвердить внутренние правовые акты “Порядок подготовки и проведения Общего собрания участников ОАО “Юнибанк”” и “Положение о Совете ОАО “Юнибанк””.

за – 170.456.334 голоса или 94.04% голосов участников

против - 0 голосов

воздержался - 0 голосов

недействительных - 0 голосов

Анна Бадоян объявила о том, что все вопросы повестки дня Собрания рассмотрены, решения по ним приняты.

Председатель Правления Месроп Акопян поблагодарил всех за участие в мероприятии и предложил желающим задать вопросы.

Прозвучали вопросы относительно льгот для акционеров, тарифов обслуживания, планов расширения географии филиальной сети, благотворительных проектов Банка и т.д., а также вопросы, касающиеся законодательного регулирования открытых акционерных обществ. На все вопросы были предоставлены исчерпывающие ответы.

Председатель Союза банков Армении Даниэл Азатян выступил с речью, поздравил акционеров и руководство Юнибанка за проделанную эффективную работу и достигнутый прогресс. Отметил, что на протяжении более 20-и лет деятельности Юнибанк всегда успешно позиционировал себя на рынке и гибко адаптировался к новым реалиям. Пожелал новых успехов и высоких результатов в дальнейшей деятельности в качестве передового банка не только в Армении, но и в регионе.

Председатель Собрания Гагик Закарян выразил благодарность Даниэлу Азатяну за продуктивное взаимодействие Юнибанка и Союза банков Армении, также поблагодарил всех участников за присутствие на Годовом общем собрании акционеров Юнибанка.

Собрание акционеров завершилось в 15:00.

Гагик Закарян
Председатель

Анна Бадоян
Секретарь

г. Ереван, 08.05.2024г.

